**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հսկողական համակարգերի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-02/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «28» մարտի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արմեն Ասլանյան՝** Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար, (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Համբարձումյան՝** Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

**Սարգիս Արմենակյան՝** Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

**Արման Ղուկասյան՝** Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

**Ավետիք Ավագյան՝** ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ):

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Դավիթ Թովմասյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄհՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-02/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի մարտի 28-ին, ժամը 12:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Սույն ընթացակարգի գնման հայտով ծառայության մատուցման համար սահմանված գինն է.

| Չափաբաժինների համարները | Չափաբաժնի անվանումը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Անվտանգության տեսախցիկների վերանորոգման ծառայություններ | **1 000 000** |
| 2 | Անվտանգության դարպասների վերանորոգման ծառայություններ | **1 000 000** |
| 3 | Դռների անվտանգության էլեկտրամագնիսական փականների վերանորոգման ծառայություններ | **2 000 000** |

**3.** Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն, հեռախոսահամարը |
|---|---|
| «ՍԵԳ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Սարկավագի փ. 72/2, Հեռ. (077)660786 |
| «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Ն. Տիգրանյան 27,Հեռ. (010)231520, (091)011619 |
| «Այ Սերվիս» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Հ. Հակոբյան 3, Հեռ. (+37496) 223000 |

**4.** Համակարգում 17.03.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**5. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

5.1 «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Այ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1. «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի, «Այ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1-ին Չափաբաժնի գնային առաջարկի:

6.2. «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից 1-ին Չափաբաժնով ներկայացված հայտում <<Գնի առաջարկը>> (Հավելված 4) կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ սխալ է հաշվարկված ԱԱՀ-ն:

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից 1-ին Չափաբաժնով ներկայացված հայտը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**7. Մասնակիցների առաջարկած գները՝ (Չափաբաժին 1)**

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գումարը |
|---|---|---|---|---|
| **1** | «ՍԵԳ» ՍՊԸ | 1753000 | - | 1753000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ | 2463000 | 444000 | 2955600 |
| 3 | «Այ Սերվիս» ՍՊԸ | 1282000 | - | 1282000 |

**8. Մասնակիցների առաջարկած գները՝ (Չափաբաժին 2)**

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | 896000 | - | 896000 |
| 2 | «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ | 1188000 | 237600 | 1425600 |
| 3 | «Այ Սերվիս» ՍՊԸ | - | - | - |

**9. Մասնակիցների առաջարկած գները՝ (Չափաբաժին 3)**

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | 1985000 | - | 1985000 |
| 2 | «Էլիպս Ջիէյ» ՍՊԸ | 1214500 | 242900 | 1457400 |
| 3 | «Այ Սերվիս» ՍՊԸ | - | - | - |

10. 1-ին չափաբաժնի մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մարտի 31-ին, ժամը 11:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***Գնահատող հանձնաժողովի նախագահ՝***

Ա. Ասլանյան

(ստորագրություն)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Կ. Համբարձումյան

(ստորագրություն)

Ս. Արմենակյան

(ստորագրություն)

Ս. Ղուկասյան

Ն. Ավագյան

***Գնումները համակարգող***
Դ. Ծովմասյան